

ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի շնորհավորական ուղերձը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ

Սիրելի սյունեցիներ,

Պատմության գիրկը կանցնի ևս մեկ տարի, և մենք հրաժեշտ կտանք 2012 թվականին ու կդիմավորենք Նոր տարին՝ նոր հույսերով ու ակնկալիքներով:

Անցնող տարին մարզի կյանքում ամենադյուրինը չէր, բայց մենք ձգտել ենք անել առավելագույնը՝ դժվարությունները հաղթահարելու համար: Արվածն առավելապես տեսանելի է քաղաքաշինության ու հանքարդյունաբերության, կրթության ու դպրոցաշինության, համայնքային ենթակառուցվածքների ու զբոսաշրջության զարգացման ոլորտներում: Անշուշտ, կան բազում չլուծված խնդիրներ, բայց համոզված եմ՝ մեր միակամությամբ ու համատեղ ջանքերով հասնելու ենք նաև դրանց լուծմանը և մեր ժողովրդի վաղվա օրը լինելու է ավելի լուսավոր, բարեկեցիկ ու ապահով, իսկ երկիրը՝ ավելի զորեղ ու ծաղկուն:

Տակավին չեն վերացել մեր երկրին ուղղված արտաքին ու ներքին մարտահրավերները, և դրանց հաղթահարման ու մեր լինելիության իրավունքն ապացուցելու համար մեզանից յուրաքանչյուրիցս պահանջվում է մի բան՝ իր գործում լինել բարեխիղճ ու նվիրյալ: Կարծում եմ, որ միայն այդ ձևով կկարողանանք դիմակայել ժամանակի հրամայականներին ու լուծել մեր առջև ծառայած ցանկացած խնդիր:

Թանկագին հայրենակիցներ, Նոր տարին իսկապես ընտանեկան յուրօրինակ տոն է, որ միավորում է բոլորիս, հեռու և մոտ գտնվող հարազատներին ու բարեկամներին, տոն՝ լի անհուն սիրով ու ջերմությամբ, տոն՝ բարության ու համերաշխության:

Ուրեմն, թող Նոր տարին ջերմություն ու երջանկություն բերի ձեր ընտանիքներին, թող իրականանան ձեր իղձերն ու նպատակները:

Մաղթում եմ ձեզ քաջառողջություն և արևշատություն, իսկ ձեր օջախներին՝ խաղաղություն ու բարօրություն:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Ս. Խաչատրյան